



ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՑԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՎԱՆԱԶՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հաստատված է ամբիոնի նիստում

___ Օտար լեզուների և գրականության ___
ամբիոնի անվանումը

Ամբիոնի վարիչ _Թ.Վ.Թադևոսյան_

/Ս.Ա.Հ./

Արձանագրություն № 13

«23» 12 2022__ թ

Բանավոր խոսքի հմտություններ-1 ՕԼԳ/Բ-116

ԴԱՍԸՆԹԱՑԻ

Դասիչ, դասընթացի անվանում

ՈՒՍՈՒՄՆԱՍԵԹՈՂԱԿԱՆ ՓԱԹԵԹ

Մասնագիտություն՝ _____ 023102.00.6 _____ Օտար լեզու և
գրականություն _____

/դասիչ, մասնագիտության լրիվ անվանումը/

Կրթական ծրագիր՝ _____ 023102.02.6 _____ Բանավոր խոսքի
հմտություններ _____

/դասիչ, կրթական ծրագրի լրիվ անվանումը/

Որակավորման աստիճան՝ _____ Բանասիրության
բակլավր _____

/բակլավր, մագիստրատուրա/

Ամբիոն՝ _____ Օտար լեզուների և
գրականության _____

/ամբիոնի լրիվ անվանումը/

Ուսուցման ձևը՝ _____
հեռակա _____

/առկա, հեռակա/

Կուրս/կիսամյակ _____ 1 կուրս, 1
կիսամյակ _____

Դաս ախտ ս (ն է ր)՝ _____ Սիրունյան Նելլի

/անուն, ազգանուն/

Վանաձոր- 2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.	Դասընթացի դերը և տեղը կրթական ծրագրում	3
2.	Դասընթացի նպատակը և խնդիրները	3
3.	Դասընթացին մասնակցելու նախնական մուտքային գիտելիքները, կարողությունները և հմտությունները	4
4.	Դասընթացի կրթական վերջնարդյունքները	
5.	Դասընթացի դերը կրթական ծրագրի շրջանավարտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորման հարցում ըստ աշխատաշուկայի պահանջների	
6.	Դասընթացի ծավալը, ուսումնական աշխատանքի տեսակները, արդյունքների ամփոփման ձևերը	
7.	Ուսումնական աշխատանքները տեսակները	
8.	Դասավանդման մեթոդներ	
9.	Ուսումնառության մեթոդները	
10.	Դասընթացի համառոտ բովանդակությունը, ուսումնական աշխատանքի ծավալը	

- 11. Ուսումնամեթոդական գրականության ապահովման քարտ.
- 12. Դասընթացի ուսումնամեթոդական քարտ.
 - 12. 1 Դասախոսությունների ուսումնամեթոդական քարտ
 - 12. 2 Գործնական աշխատանքների /սեմինար պարապմունքների ուսումնամեթոդական քարտ.
 - 12. 3 Լաբորատոր աշխատանքների ուսումնամեթոդական քարտ.
 - 12. 4 Ինքնուրույն աշխատանքների ուսումնամեթոդական քարտ
- 13. Դասընթացի նյութատեխնիկական միջոցների ապահովում.
- 14. Գնահատում.
 - 14. 1 Ուսանողների գիտելիքների ստուգում.
 - 14. 2 Հարցաշար.
 - 14. 3 Գնահատման չափանիշներ.
- 15. Դասընթացի համառոտ նկարագրիչ.

ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

1. Դասընթացի դերը և տեղը կրթական ծրագրում¹.

«Բանավոր խոսքի հմտություններ» դասընթացը կարևորվում է ժամանակակից կրթության և գործարար բնագավառում մասնագետների պատրաստման գործընթացում, ներառված է 023102.00.6 կրթական ծրագրի ուսումնական պլանի «Հատուկ մասնագիտական» կրթամասում:

2. Դասընթացի նպատակը և խնդիրները.

2.1. Դասընթացի նպատակն է.

- Անգլերենի թեմատիկ բառապաշարի ընդլայնում:
- Լեզվի զարգացման օրինաչափությունների վերաբերյալ գիտելիքների փոխանցում ուսանողներին:
- Անգլերեն լեզվի բառապաշարի և քերականական կառույցների հիմնահարցերի լուսաբանում խոսքի գրավոր և բանավոր դրսևորումներում:

2.2. Դասընթացի խնդիրներն են.

- Ձևավորել քերականական և բառապաշարային կայուն գիտելիքներ և հմտություններ:
- Ջարգացնել ուսանողների արտասանական հմտությունները, նպաստել հնչյունների ճիշտ արտաբերմանը, արտահայտությունների և նախադասությունների ճիշտ շեշտադրմանը, միաժամանակ տալ տեսական գիտելիքներ հնչյունների, վանկերի տեսակների մասին:
- Ամրապնդել ուսանողների կողմից ձեռքբերված տեսական գիտելիքները գործնական իրավիճակային խնդիրներով:
- Կատարելագործել ուսանողների հաղորդակցման հմտությունները՝ բազմապիսի երկխոսությունների, առօրյա կյանքից վերցված իրավիճակների դերախաղումների միջոցով՝ օգտագործելով ձայնագրություններ, տեսաֆիլմեր:

3. Դասընթացին մասնակցելու նախնական մուտքային գիտելիքները, կարողությունները և հմտությունները /դասընթացները/.

«Բանավոր խոսքի հմտություններ» դասընթացին մասնակցելու կարևոր նախապայման է, որ ուսանողները պետք է ունենան որոշ գիտելիքներ անգլերեն լեզվի կառուցվածքի, առանձնահատկությունների և խոսքիմասային ձևերի մասին, ինչպես նաև ունենան բավարար գիտելիքներ քերականությունից, հնչյունաբանությունից և բառագիտությունից:

¹ Ներկայացվում է դասընթացի կարևորությունը տվյալ կրթական ծրագրի խնդիրների լուծման հարցում և տեղը ուսումնական պլանում ըստ կրթաբլոկների

:

4. Դասընթացը ձևավորում է հետևյալ կրթական վերջնարդյունք(ներ)² և /կամ կոմպետենցիաները.

«Անգլերեն լեզու» դասընթացի ուսումնասիրման արդյունքում ուսանողի ակնկալվող վերջնարդյունքներն են.

1. անգլերեն լեզվի բառակազմական և քերականական կառուցվածքների մասին, որն անհրաժեշտ է լեզվի սահուն կիրառման համար,
2. խոսակցական և գրական խոսքում բառապաշարի, քերականության և հնչյունաբանության առանձնահատկությունները,
3. լեզվական կայուն հմտություններ՝ դրսևորման բանավոր ձևում,
4. հարուստ բառապաշար ազատ խոսքի ձևավորման համար,
5. հասկանալ խոսակցական, բնիկ խոսողների կողմից հնչող անգլերենը,
6. ճիշտ օգտագործել ձեռք բերած քերականական, բառապաշարային և հնչյունաբանական գիտելիքները՝ արդյունավետ հաղորդակցվելու համար բազմաբնույթ իրավիճակներում,
7. կարդալ, հասկանալ և քննարկել բազմապիսի անգլերեն տեքստեր,
8. կռահել անձանոթ բառերի ու արտահայտությունների իմաստը կոնտեքստից, կատարել բառարանային աշխատանք,
9. պատկերացում կազմել լեզվի հասարակական գործառույթների մասին,
10. մասնագիտական տեքստերի բովանդակությունն ու կառուցվածքը քննարկելու հմտությունների,
11. անգլերեն դասական և ժամանակակից ստեղծագործություններ մեկնաբանելու և վերլուծելու կարողությունների,
12. մասնագիտական տեսակետների ու փաստարկների վերլուծություններ կատարելու հմտությունների,

² <http://www.vsu.am/karg/ararkayakan-nkaragir-17.pdf>

Դասընթացի ուսումնասիրման արդյունքում ուսանողը ձեռք կրերի հետևյալ կոմպետենցիաները.

Ա) Ընդհանրական կոմպետենցիաներ

Գործիքային կոմպետենցիաներ (ԳԿ)՝

- ԳԿ1** վերլուծելու և սինթեզելու ունակություն,
 - ԳԿ4** մասնագիտական ոլորտի գիտելիքների հիմունքներ,
 - ԳԿ9** խնդիրների լուծում,
 - ԳԿ10** որոշումների ընդունում:
- Համակարգային կոմպետենցիաներ (ՀԳԿ)՝**
- ՀԳԿ1** գիտելիքները գործնականում կիրառելու կարողություն,
 - ՀԳԿ2** հետազոտություններ կատարելու ունակություններ,
 - ՀԳԿ3** սովորելու ունակություն,
 - ՀԳԿ8** ինքնուրույն աշխատելու ունակություն,

Բ) Առարկայական (մասնագիտական) կոմպետենցիաներ (ԱԿ)

- ԱԿ2** հստակ հաղորդել ստացված հենքային գիտելիքները,
- ԱԿ4** ցուցաբերել առարկայի ընդհանուր կառուցվածքի և առանձին մասերի միջև կապերի իմացություն,
- ԱԿ6** կիրառել տվյալ առարկային բնորոշ մեթոդները,
- ԱԿ11** տիրապետեն ինքնուրույն հետազոտության մեթոդներին և կարողանան մեկնաբանել հետազոտության արդյունքները,
- ԱԿ14** տիրապետեն տվյալ մասնագիտական մակարդակում պահանջվող կոմպետենցիաներին:

5. Դասընթացի դերը կրթական ծրագրի շրջանավարտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորման հարցում ըստ աշխատաշուկայի պահանջների³.

«Անգլերեն լեզու» դասընթացից ձեռք բերված գիտելիքներն և հմտությունները շրջանավարտը կարող է կիրառել լեզվանաբի մասնագիտական գործունեության ընթացքում, գրասենյակային տարբեր աշխատանքներ կատարելու, նաև ասպիրանտուրայում կրթությունը շարունակելու և կրթական և գործարար բնագավառում գիտական հետազոտություններ կատարելու նպատակով:

6. Դասընթացի ծավալը, ուսումնական աշխատանքի տեսակները, արդյունքների ամփոփման ձևերը

Չափանիշ	հետևյալ ուսուցման համակարգ
Դասընթացի ընդհանուր աշխատատարությունը (կրեդիտ /ընդհանուր ժամաքանակ)	Կրեդիտ/ ժամ

Աշխատանքի տեսակը	ժամաքանակ
Դասախոսություն	
Գործնական աշխատանք	16
Սեմինար պարապմունք	

³ Նշվում է, թե տվյալ դասընթացի յուրացման, ամփոփման արդյունքում ձեռքբերված գիտելիքները, հմտությունները և կարողությունները աշխատաշուկայի որ բնագավառներում և ոլորտներում կարող է շրջանավարտը կիրառել

Լաբորատոր աշխատանք	
Ինքնուրույն աշխատանք	3,2
Ընդամենը	
Ստուգման ձևը (ստուգարք)	

7. Ուսումնական աշխատանքների տեսակները⁴.

- Դասախոսությունը** դասախոսի կողմից դասընթացի ծրագրի շրջանակներում գիտական-տեղեկատվական թեմայի վերաբերյալ տրամաբանորեն կառուցված, հետևողական ու պարզ խոսքի շարադրանքն է, որի նպատակն է ուսանողին տալ համապարփակ գիտելիքներ: Դասախոսը վերլուծում, մեկնաբանում է թեմայի առավել կարևոր, դժվար ընկալելի, հանգուցային հարցերը: Դասախոսությունը ուսանողի առջև ուրվագծվող գիտական մի ճանապարհ է, որը նա կարող է միայն անցնել գիտական գրականության ընթերցանության, ուսումնական բնույթի այլ պարապմունքների և ինքնուրույն կատարած աշխատանքների շնորհիվ: Դասախոսը պետք է խթանի ուսանողի ակտիվ իմացաբանական գործունեությունը, նպաստի նրանց ստեղծագործական մտածողության ձևավորմանը: Ուսանողը նույնպես պետք է լինի դասախոսության ակտիվ մասնակից: Ուսանողը դասախոսությանը ներկայանալուց առաջ պետք է ծանոթացած լինի տվյալ դասին ներկայացվող թեմային, որպեսզի կարողանա մասնակցել ուսումնական գործընթացին:
- Գործնական աշխատանքների** ժամանակ ուսանողը կատարում է լսարանային աշխատանք՝ դասախոսի անմիջական ղեկավարման ներքո: Գործնական պարապմունքները անցկացվում են գործնական խնդիրների լուծման, առաջադրանքների իրականացման, թեստերի, իրավիճակային վերլուծությունների, գործարար խաղերի, խմբային աշխատանքների, տնային առաջադրանքների, ուղեղային գրոհների, ինտերակտիվ ուսուցման միջոցով՝ տեսական գիտելիքները կիրառելու, գործնական ունակությունների և հմտությունների ձեռքբերման և ամրապնդման նպատակով: Դասախոսն առաջադրում է գործնական պարապմունքների թեման, նպատակը, խնդիրները, այն հարցերը, որոնք պետք է լուծել գործնական պարապմունքի ընթացքում, գործնական պարապմունքի անցկացման մեթոդները և պատասխանում է ուսանողների տված հարցերին:
- Մեմինար պարապմունքները** խմբային պարապմունքների հիմնական տեսակներից է, որի ընթացքում ուսանողը սովորում է բանավոր շարադրել նյութը, պաշտպանել իր տեսակետները և եզրահանգումները: Մեմինարի ընթացքում ուսանողները քննարկում, պատասխանում են թեման, զեկույցները և ռեֆերատները, որոնք հանձնարարել է դասախոսը:

Մեմինարին պատրաստվելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել հիմնական և լրացուցիչ գրականություն տվյալ թեմայով: Գրականության ուսումնասիրությունից և համառոտագրումից հետո պետք է կազմել պլան՝ բանավոր պատասխանի համար, ապա մտածել էլույթի բովանդակության հարցադրումների և պատասխանների մասին:

⁴ Թողել այն տեսակը, որը տվյալ դասընթացի դասավանդման համար նախատեսված է: Դասավանդողը կարող է նկարագրությունը փոխել կամ լրացումներ կատարել:

- **Լաբորատոր աշխատանքները** նպաստում են տեսական նյութի առավել լավ յուրացմանը և ամրապնդմանը: Լաբորատոր աշխատանքները նպատակ ունեն ամրապնդելու ուսումնասիրվող թեմաների տեսական դրույթները, ուսանողներին ուսուցանելու փորձարարական հետազոտությունների մեթոդները, հաղորդելու ինքնուրույն վերլուծության, տվյալների ամփոփման, լաբորատոր սարքավորումների, համակարգիչների, սարքերի, էլեկտրոնային ծրագրերի հետ աշխատելու փորձ և հմտություններ: Լաբորատոր աշխատանքն անցկացման համար ուսանողը պարտավոր է ուսումնասիրել թեմային վերաբերող տեսական նյութը (դասախոսություն, համապատասխան գրականություն) և փորձի, հետազոտության մեթոդալուծիան:

Դասախոսի հսկողությամբ ուսանողը իրականացնում է փորձը, հետազոտությունը, գրանցում է արդյունքները և կատարում (գրանցում) համապատասխան եզրակացություն

- **Ինքնուրույն աշխատանքը** ուսանողների ուսումնական, գիտահետազոտական աշխատանքն է, որն իրականացվում է դասախոսի առաջադրանքով և մեթոդական ղեկավարությամբ, բայց առանց նրա անմիջական ղեկավարության:

Ինքնուրույն աշխատանքի տեսակներն են⁵

- **Ռեֆերատ** – ուսանողների ինքնուրույն գրվող, որտեղ ուսանողը շարադրում է որևէ հարցի կամ թեմայի էությունը՝ հենվելով գրական աղբյուրների վրա (դասագրքեր, ձեռնարկներ և այլն):
- **Գործարար խաղեր** – պայմանական իրավիճակներում սոցիալ-տնտեսական համակարգերի և մարդկանց մասնագիտական գործունեության կառավարման գործընթացների նմանակեղծային մոդելավորում՝ առաջացող հիմնախնդիրների ուսումնասիրման և լուծման նպատակով:
- **Էսսե** – արձակ ստեղծագործություն՝ քննադատության և լրագրության ժանրի որևէ խնդրի ազատ վերլուծություն:
- **Կլոր սեղան** – ինքնուրույն աշխատանքի ձևին բնորոշ է թեմատիկ բանավեճի համադրումը խմբային աշխատանքի հետ:
- **Կունկետս իրավիճակների վերլուծություն** – ուսանողների ակտիվ գործունեության կազմակերպման ամենաարդյունավետ և տարածված ձևերից մեկն է, որը զարգացնում է մասնագիտական և կեցությանը վերաբերող տարբեր հարցերի վերլուծության կարողությունը:
- **Նախագծերի մեթոդ** – ուսումնաճանաչողական, ստեղծագործական կամ խաղային համատեղ գործունեության տեսակ է, սովորող-գործընկերների միջև, որոնք ունեն ընդհանուր նպատակ և համաձայնեցված միջոցներ՝ ուղղված որևէ խնդրի լուծման կամ որոշակի արդյունքի ձևակերպման:
- **Հարցի նախապատրաստման մոդել** – կամավորության սկզբունքով ընտրված ուսանողն իր նախընտրած հակիրճ ձևով նախապատրաստում է տվյալ առարկայից քննության կամ ստուգարքի հարցերի իր պատասխանների փաթեթը: Քննությունից (ստուգարքից) 1 շաբաթ առաջ նա հանձնում է փաթեթը դասախոսին, որը ստուգում է այդ նյութերը և որոշում դրանց համապատասխանությունը տվյալ առարկայի բովանդակությանը:
- **Ինքնուրույն աշխատանք համացանցում** – նոր տեղեկատվական տեխնոլոգիաները կարող են օգտագործվել հետևյալ նպատակներով՝ համացանցում անհրաժեշտ տեղեկատվության որոնման համար, երկխոսություն համացանցում, թեմատիկ ցանցային էջերի օգտագործում:
- **Աշխատանքային տեսք** – նախատեսված է ուսանողների ինքնուրույն

⁵ Թողել այն տեսակը, որը տվյալ դասընթացի դասավանդման համար նախատեսված է: Դասավանդողը կարող է նկարագրությունը փոխել կամ լրացումներ կատարել:

աշխատանքների համար և թույլ է տալիս գնահատել ուսումնական նյութի յուրացման աստիճանն ուսանողների կողմից:

- **Չեկույց** – որևէ գիտական կամ հետազոտական թեմայի շուրջ կատարած եզրակացությունների, ստացած արդյունքների ներկայացում ուսանողի կողմից:
- **Հարցազրույց** – վերահսկողության միջոց, որը կազմակերպվում է որպես հատուկ զրույց դասավանդողի և ուսանողների միջև՝ կապված այնպիսի թեմայի հետ ինչպիսին կարգապահությունն է, և նախատեսված է հստակեցնել ուսանողների գիտելիքների շրջանակը կոնկրետ թեմայի, հարցի վերաբերյալ:

8. Դասավանդման մեթոդներն են՝⁶ հիմնահարցային դասախոսություն, դասախոսություն-երկխոսություն, դասախոսություն-քննարկում, *թեմատիկ սեմինար*, սեմինար-բանավեճ, գործնական աշխատանք՝ անհատական աշխատանք, գործնական աշխատանք՝ խմբային աշխատանք, ուսուցում գործողությամբ (action learning), իրավիճակային խնդիրների վերլուծություն, գործարար խաղեր. . . .

9. Ուսումնառության մեթոդներն են՝⁷ մտքերի քարտեզագրում, թիմային քննարկում, իրադրությունների վերլուծություն, ավգորիթմների և հրահանգների կազմում, աղյուսակների և դասակարգման համեմատման և համակարգման սխեմաների կազմում, փորձի/հետազոտության արդյունքների վերաբերյալ եզրակացության ներկայացում. . . .

⁶ Ներկայացված են օրինակներ: Դասավանդողը կարող է նկարագրությունը փոխել կամ լրացումներ կատարել:

⁷ Ներկայացված են օրինակներ: Դասավանդողը կարող է նկարագրությունը փոխել կամ լրացումներ կատարել:

10. Դասընթացի համառոտ բովանդակությունը, ուսումնական աշխատանքի ծավալը՝ ըստ բաժինների և թեմաների⁸.

h/h	Թեմա (բաժին)	Ուսումնական աշխատանքի ժամաքանակն ըստ տեսակների				
		դասախոսություն	սեմինար վարապետներ	գործնական աշխատանք	լաբորատոր աշխատանք	Ինքնուրույն աշխատանք
1.	Unit 1. Identity. Me and my languages.			2		
2.	Same or different?			2		
3.	Tell me about yourself			2		
4.	The blind painter.			2		
5.	Unit 2 Fact or Fiction?			2		
6.	What really happened?			2		
7.	I don't believe it.			2		
8.	Hustle.			2		
ԸՆԴԱՍԵՆԸ				16		

11. Ուսումնամեթոդական գրականության ապահովման քարտ

h/h	Անվանումը/հեղինակ	Հրատարակության տարի
-----	-------------------	---------------------

⁸ Նման է օրացուցային պլանին

Պարտադիր գրականություն (ՊԳ)		
1.	Antony Clare, JJ.Wilson Speak out Intermediate Student's book	Pearson 2 nd edition
2.		
Լրացուցիչ գրականություն(ԼԳ)		
1.	Antony Clare, JJ.Wilson Speak out Intermediate Work book	Pearson 2 nd edition
Համացանցային տեղեկատվական պաշարներ (ՀՏՊ)/ Էլեկտրոնային աղբյուրներ (ԷԱ)		
1.	Wikipedia	
2.		

12. Դասընթացի ուսումնամեթոդական քարտ

12.1. Գործնական աշխատանքների /սեմինար պարապմունքների ուսումնամեթոդական քարտ

Թեմա	Ուսումնասիրվող հարցեր	Ժամաքանակ	Ստուգման ձևեր	Գրականություն
Unit 1. Identity. Me and my languages.	Question forms.	2	Ինտերակտիվ Հարց ու պատասխան Ֆրոնտալ հարցում	ՊԳ, ԼԳ
Same or different?	Review of verb tenses.	2		
Tell me about yourself	Talking about yourself.	2		

	The blind painter.	Present perfect and past simple.	2		
	Unit 2 Fact or Fiction?	Narrative tenses.	2		
	What really happened?	Vocabulary: the news/	2		
	I don't believe it.	A new report: learn to use linkers.	2		
	Hustle.	Types of story.	2		
	Ընդամենը		16		

12.3 Ինքնուրույն աշխատանքների ուսումնամեթոդական քարտ

h/h	Ինքնուրույն աշխատանքի թեմաները	Ուսումնասիրվող հարցեր	Աշխատանքի տեսակը ⁹	Ներկայացման ժամկետները	Ստուգման ձևը	Գրականություն ¹⁰
1.	The world's best-known conspiracy theories.		Ռեֆերատ/ Ինքնուրույն աշխատանք համացանցում/ /Presentation	կիսամյակի ընթացքում	բանավոր/ ինտերակտիվ	ՊԳ, ԼԳ Internet sources
2.	Are men and women really different?		Ռեֆերատ/ Ինքնուրույն աշխատանք համացանցում/ /Presentation	կիսամյակի ընթացքում	բանավոր/ ինտերակտիվ	ՊԳ, ԼԳ Internet sources

13. Դասընթացի նյութատեխնիկական միջոցների ապահովում¹¹

Ռեսուրսի անվանումը	Ռեսուրսի անվանումը, քանակը, նկարագրությունը (անհրաժեշտության դեպքում)
Լսարան (հատուկ կահավորմամբ)	
Նյութեր լաբորատոր աշխատանքների համար	
Սարքեր, սարքավորումներ	Համակարգչային սարքավորումներ, հուսալի ինտերնետ կապ
Համակարգչային ծրագրեր	
Այլ	

⁹ Տես 7-րդ կետի հինգերորդ պարբերությունը

¹⁰ Ըստ 12-րդ կետում նշված ցանկի, օր. ՊԳ 1, ԼԳ 2 և այլն

¹¹ Նշվում են սարք-սարքավորումների, համակարգչային ծրագրերի նկարագրությունները և քանակը, որոնք անհրաժեշտ են տվյալ դասընթացի ուսումնական գործընթացը կազմակերպելու համար

14. **Գնահատում**

Համալսարանում գործում է բակալավրիատի, մագիստրատուրայի և ասպիրանտուրայի ուսանողների գիտելիքների պարբերական ստուգման և գնահատման բազմագործոնային համակարգ, որի կիրառման հիմնական նպատակներն են՝

- կազմակերպել ուսումնառության համաչափ աշխատանքային գործընթաց, ապահովել գիտելիքների համակողմանի ստուգում, խթանել ուսանողի ինքնուրույն աշխատանքը,
- իրականացնել ինքնուրույն առաջադրանքների, ընթացիկ ստուգումների (ստուգարքներ և քննություններ), ուսումնական գործընթացի այլ բաղադրիչների հաշվառում հետադարձ կապի արդյունավետ մեխանիզմների ներմուծման միջոցով՝ ի նպաստ ուսումնառության գործընթացի բարելավման:

Համալսարանում գնահատման գործընթացը կանոնակարգվում է համաձայն գործող կարգի¹²:

14.1. **Գիտելիքների ստուգման և գնահատման բաղադրիչներն են՝**

- ուսումնական գործընթացին ուսանողի մասնակցության աստիճանի գնահատում դասերին հաճախումների հաշվառման միջոցով՝ առավելագույնը 20 միավոր,
- գործնական (սեմինար) և լաբորատոր աշխատանքների ընթացքում նրա ակտիվության և հմտությունների հաշվառում և գնահատում ընթացիկ ստուգումների միջոցով՝ առավելագույնը գումարային 20 միավոր,
- ինքնուրույն աշխատանքների (անհատական առաջադրանքներ) հաշվառում և գնահատում առավելագույնը գումարային 20 միավոր,
- դասընթացի ենթաբաժինների և ծրագրով նախատեսված այլ առաջադրանքների կատարման և յուրացման ընթացիկ ստուգում և գնահատում կիսամյակի ընթացքում (ընթացիկ քննություններ կամ ստուգարքներ)՝ առավելագույնը գումարային 40 միավոր,
- ստուգման արդյունքների ամփոփում գնահատման նշված բաղադրիչների արդյունքների հիման վրա և դասընթացի արդյունարար գնահատականի ձևավորում՝ առավելագույնը գումարային 100 միավոր:

14.2. **Ուսանողների գիտելիքների ստուգում.**

Դասընթացն ամփոփվում է ստուգարքով

¹²«Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ուսանողների գիտելիքների ստուգման, գնահատման և հաշվառման կանոնակարգ» (ընդունված ՎՊՀ-ի գիտական խորհրդի կողմից 30.06.2022թ.),

Ստուգարքով ամփոփվող դասընթացն ավարտվում է կիսամյակի բաղադրիչների գնահատումների արդյունքներով:

14.3. Գնահատման չափանիշները¹³.

- Գործնական աշխատանքները 2 ստուգում 10 միավոր (գումարային 20 միավոր)
- Ինքնուրույն աշխատանքը 2 ստուգում 10 միավոր (գումարային 20 միավոր)

¹³ Լրացվում է ըստ ամբիոնի /դասախոսի որոշման

«ՎԱՆԱԶՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐԻՉ

Մասնագիտություն՝ _____ 023102.00.6
__Բանավոր խոսքի հմտություններ՝ ՕԼԳ/մ-116

_____ /դասիչ, մասնագիտության

լրիվ անվանումը/

Կրթական ծրագիր՝ _____ 023102.02.6 _____ Բանավոր խոսքի հմտություններ

_____ /դասիչ, կրթական ծրագրի լրիվ անվանումը/

Որակավորման աստիճան՝ _____ Բանասիրության
բակալավր _____

_____ /բակալավր, մագիստրատուրա/

Վանաձոր 2023

Առկա ուսուցման համակարգ

Դասընթացի թվանիշը, անվանումը	Բանավոր խոսքի հմտություններ-1 ՕԼԳ/բ-116			
Դասընթացին հատկացվող կրեդիտը	3 կրեդիտ			
Ուսումնառության տարի / կիսամյակ	1-ին տարի, 1-ին կիսամյակ			
Ժամերի բաշխումը	Լսարանային	16	Դասախոսություն	
			Մեմինար	
			Լաբորատոր աշխատանք	
			Գործնական աշխատանք	20
	Ինքնուրույն	3,2		
Ընդամենը				
Ստուգման ձևը				
Դասընթացի նպատակը	<p>« Բանավոր խոսքի հմտություններ » առարկան առանձնակի է կարևորված անգլերենի ընդհանուր իմացության զարգացման գործում: Առարկայի հիմնական նպատակն է հարստացնել ուսանողների անգլերեն լեզվի գիտելիքները, կատարելագործել նրանց բանավոր և գրավոր խոսքի հմտությունները, ընդլայնել այն թեմաների շրջանակը, որտեղ նրանք կարող են արդյունավետ օգտագործել անգլերեն լեզուն, ստեղծել համապատասխան պայմաններ՝ կիրառելու լեզուն հաղորդակցության գործընթացում, ուսանողներին նախապատրաստել լեզվաբանական ցիկլի առարկաների ուսումնասիրություններին: Առարկայի առաջադրած թեմատիկ դասընթացը հնարավորություն կտա ուսանողներին ձեռք բերած իմացություններն ու գիտելիքները արդյունավետ օգտագործել անգլերենի տեսական և գործնական առարկաների յուրացման գործընթացում՝ դրանք դարձնելով առավել ուշագրավ:</p>			
Դասընթացի վերջնարդյունքները	<p>Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.</p> <p><i>Գիտելիք</i></p> <p><i>Առարկայի ուսուցման արդյունքում ուսանողը պետք է իմանա.</i></p> <ul style="list-style-type: none"> • անգլերեն լեզվի բառակազմական և քերականական 			

	<p>կառուցվածքների մասին, որն անհրաժեշտ է լեզվի սահուն կիրառման համար</p> <ul style="list-style-type: none"> • խոսակցական և գրական խոսքում բառապաշարի ու քերականության առանձնահատկությունները • լեզվական կայուն հմտություններ՝ դրսևորման բանավոր և գրավոր ձևերում • հարուստ բառապաշար ազատ խոսքի ձևավորման համար <p><i>Հմտություն</i></p> <p><i>Առարկայի ուսուցման արդյունքում ուսանողը պետք է տիրապետի.</i></p> <ul style="list-style-type: none"> • Լեզվական խոր և համակողմանի գիտելիքների • Չեռք բերած գիտելիքները գործնականում կիրառելու <p><i>Կարողունակություն</i></p> <p><i>Առարկայի ուսուցման արդյունքում ուսանողը պետք է կարողանա.</i></p> <ul style="list-style-type: none"> • կատարել ինքնուրույն եզրակացություններ, համեմատություններ, զուգահեռներ անցկացնել դրանց միջև • ցուցաբերել համապատասխան լեզվամտածողություն • զանազանել ամերիկյան և բրիտանական անգլերենի տարբերակիչ առանձնահատկությունները • կատարել տարաբնույթ տեքստերի թարգմանություններ
<p>Դասընթացի բովանդակությունը</p>	<p>Unit 1. Identity. Me and my languages. Same or different? Tell me about yourself The blind painter.</p> <p>Unit 2 Fact or Fiction? What really happened? I don't believe it. Hustle.</p> <p>Review</p>

<p>Գնահատման մեթոդները և չափանիշները</p>	<p>Գիտելիքների ստուգման և գնահատման բաղադրիչներն են`</p> <ul style="list-style-type: none"> ▪ ուսումնական գործընթացին ուսանողի մասնակցության աստիճանի գնահատում դասերին հաճախումների հաշվառման միջոցով` առավելագույնը 20 միավոր, ▪ գործնական (սեմինար) և լաբորատոր աշխատանքների ընթացքում նրա ակտիվության և հմտությունների հաշվառում և գնահատում ընթացիկ ստուգումների միջոցով` առավելագույնը գումարային 20 միավոր, ▪ ինքնուրույն աշխատանքների (անհատական առաջադրանքներ) հաշվառում և գնահատում առավելագույնը գումարային 20 միավոր, ▪ դասընթացի ենթաբաժինների և ծրագրով նախատեսված այլ առաջադրանքների կատարման և յուրացման ընթացիկ ստուգում և գնահատում կիսամյակի ընթացքում (ընթացիկ քննություններ կամ ստուգարքներ)` առավելագույնը գումարային 40 միավոր, <p>ստուգման արդյունքների ամփոփում գնահատման նշված բաղադրիչների արդյունքների հիման վրա և դասընթացի արդյունարար գնահատականի ձևավորում` առավելագույնը գումարային 100 միավոր:</p>
<p>Գրականություն</p>	<p>Պարտադիր Antony Clare, JJ. Wilson Speak out Intermediate Student's book Pearson 2nd edition</p>

	Ληυαυαυηγ- Antony Clare, JJ.Wilson Speak out Intermediate Workbook Pearson 2 nd edition